



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՐԻՄԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ ՔՐԵՍԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ**

Քրեսենթա Հովիտի Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագի արարողութիւնները կը շարունակուին ամէն Կիրակի, կ.ե. ժամը 1-ին: 2007 տարուան վերջին Կիրակին՝ 30 Դեկտեմբերին Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Ս. Խորանին պիտի սպասարկէ շրջանի հոգեւոր մատակարար՝ Արժ. Տ. Արտակ Քհնյ. Տեմիրճեան:

Յայտնենք որ, Քրեսենթա Հովիտի Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ Կիրակի, 2008, Յունուար 6-ին, Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, Ս. Պատարագ պիտի մատուցուի կ.ե. ժամը 1-ին: Պիտի պատարագէ եւ քարոզէ շրջանի հոգեւոր մատակարար՝ Արժ. Տ. Արտակ Քհնյ. Տեմիրճեան:

## **PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AT THE CRESCENTA VALLEY PARISH**

On Sunday, December 30<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at Armenian Apostolic Church of Crescenta Valley. Services will begin at 1:00 p.m.

The Prelate will be assisted at the altar by parish pastor Rev. Ardag Demirjian. On Sunday, January 6<sup>th</sup>, Rev. Demirjian will celebrate Divine Liturgy at the parish on the Feast of the Nativity and Epiphany of our Lord Jesus Christ.

## **ԱՄԱՆՈՐԻ ՕՐԸ ՅԱՏՈՒԿ ԱՂՕԹՔ ՄԵՐ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ**

Հայկական գեղեցիկ աւանդութիւն մըն է նոր տարին դիմաւորել Աստուծոյ Տան մէջ, երախտագիտութիւն յայտնել մեզի շնորհուած բարիքներուն համար ու կեանքի նոր շրջանը բանալ աղօթքով եւ աստուածային պարգեւներու խնդրանքով:

Համաձայն այս աւանդութեան, Երեքշաբթի, Յունուար 1, 2008-ին, Նոր Տարուան առաջին օրը, Թեմիս Եկեղեցիները բաց պիտի ըլլան եւ ժամերգութիւն տեղի պիտի ունենայ:

Մեր հաւատացեալ ժողովուրդի զաւակները այսպէսով առիթ պիտի ունենան իրենց շրջաններու եկեղեցիներուն մէջ աղօթքով ու մեր եկեղեցւոյ իւրայատուկ մթնոլորտին մէջ բոլորելու Նոր Տարուան առաւօտեան առաջին ժամերը:

## **MORNING SERVICES TO BE OFFERED ON THE FIRST DAY OF THE NEW YEAR**

On the morning of Tuesday, January 1<sup>st</sup>, 2008, Prelacy churches will be open so that our faithful may offer prayers on the first day of the New Year.

Our parishioners are also invited to participate in morning services which will take place in our churches.

### **ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ «ԱՐԱՐԱՏ ՏԱՆ» ՄԷՋ**

Ուրբաթ, Յունուար 4, 2008-ին, Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան տօներուն առթիւ, Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան Զօր Նախագահութեամբ, յատուկ արարողութիւններ տեղի պիտի ունենան «Արարատ Տան» Mission Hillsի համալիրին մէջ: Ժամը 10ին, մասնակցութեամբ Թեմիս բոլոր հոգեւոր հովիւներուն, աղօթք պիտի մատուցուի հաստատութեան հիւանդանոցի բաժնին մէջ, ապա, ժամը 10:30ին, Ս. Պատարագ պիտի մատուցուի Արարատ Տան մատրան մէջ:

Պիտի պատարագէ Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Ռազնիկ քհնյ. Խաչատուրեան: Ս. Պատարագի երգեցողութիւնը պիտի կատարէ Ս. Նահատակաց եկեղեցւոյ Դպրաց Դասը, ղեկավարութեամբ խմբավար Կոմիտաս Զեշիշեանի:

### **DIVINE LITURGY AT ARARAT HOME**

On the morning of January 4<sup>th</sup>, 2008, Divine Liturgy will be celebrated at Ararat Home in Mission Hills in celebration of the Birth and Epiphany of Jesus Christ.

The services will be at 10:00 a.m. with a prayer by all Prelacy clergy in the hospital section. Divine Liturgy will be celebrated at 10:30 in the Chapel by pastor of Holy Martyrs Church Rev. Razmig Khatchadourian.

The Holy Martyrs Church Choir, under the direction of Mr. Gomidas Keshishian, will participate in services.

## **ՃՐԱԳԱԼՈՅՑՆ ՈՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ ՄԵՐ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ**

Շաբաթ, Յունուար 5, 2008ը Ս. Ծննդեան ճրագալոյցի օրն է:

Այս առիթով, Ս. Պատարագ պիտի մատուցուի մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ եւ Ս. Զաղորդութիւն պիտի տրուի մեր հաւատացեալ ժողովուրդին:

Առաջնորդ Սրբազանը Ս. Պատարագ պիտի մատուցէ Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ եւ պիտի փոխանցէ օրուան պատգամը:

Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ պիտի քարոզէ Զոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ: Իսկ Զոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ պիտի քարոզէ Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ:

Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, Կիրակի, Յունուար 6-ին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի պիտի ունենայ հանդիսաւոր Սուրբ Պատարագ, որուն աւարտին պիտի կատարուի աւանդական ջրօրհնէք:

Կլենտլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պիտի պատարագէ, իր պատգամը պիտի փոխանցէ եւ ջրօրհնէք պիտի կատարէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը:

Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ քարոզէ Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ:

Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Մոնթպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ:

Զոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Օրէնճ Բաունթիի Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ:

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօնին առիթով, մեր հեռակայ շրջաններու ծխականները եւս առիթը կ'ունենան տօնական օրերը դիմաւորելու Ս. Պատարագի արարողութեամբ:

Կիրակի, Յունուար 6-ին, Արժ. Տ. Աշոտ Բինյ. Գամպուրեան Ս. Պատարագ պիտի մատուցէ ու պիտի քարոզէ Զոլորատօ եւ Ռաքի Մաունթընի մեր եկեղեցւոյ ծխական համայնքի զաւակներուն համար: Իսկ Արժ. Տ. Խորէն Ա. Բինյ. Զապէշեան Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ պիտի քարոզէ Լաս Վեկասի Լուտերական եկեղեցւոյ մէջ:

## **CELEBRATING THE FEAST OF THE NATIVITY AND EPIPHANY WITH DIVINE LITURGY AND THE BLESSING OF WATER**

Saturday, January 5<sup>th</sup>, 2008, is the eve of the Feast of the Nativity and Epiphany of our Lord Jesus Christ. Divine Liturgy will be celebrated and Holy Communion will be offered in all Prelacy churches on this occasion.

The Prelate will celebrate Divine Liturgy and deliver the sermon at St. Sarkis Church in Pasadena.

Very Rev. Fr. Muron Aznikian will celebrate Liturgy at St. Garabed Church in Hollywood, and Very Rev. Fr. Barthev Gulumian will celebrate Liturgy at Holy Martyrs Church in Encino.

On Sunday, January 6<sup>th</sup>, the Feast of the Nativity and Epiphany of our Lord, Divine Liturgy will be celebrated in all Prelacy churches followed by the traditional blessing of water.

The Prelate will celebrate Divine Liturgy, deliver the sermon, and preside over the blessing of water at St. Mary's Church in Glendale.

H.E. Archbishop Yeprem Tabakian will be at Holy Martyrs church, while Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian will be at Holy Cross Cathedral in Montebello and Forty Martyrs Church in Orange County respectively.

Divine Liturgy will also be celebrated in our distant parishes on Sunday, January 6<sup>th</sup>, with Rev. Ashod Kambourian conducting services at our Colorado parish and Archpriest Rev. Khoren Habeshian at the Las Vegas parish.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐբԱՉԱՆԻՆ ԸՆԹՐԻՔԻ ԵՐԵԿՈՆ**

Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, յառաջիկայ Կիրակի, Յունուար 6-ի հայկական մեր տոհմիկ աւանդութեան համաձայն, Հայկական Սուրբ Ծննդեան տօնին առիթով, տեղի պիտի ունենայ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան աւանդական ընթրիքը, երեկոյեան ժամը 6:00-ին, Մոնթեպելլոյի «Բաղրամեան» սրահին մէջ, կազմակերպութեամբ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ մարմինին:

## **THE PRELATE'S TRADITIONAL NEW YEAR AND CHRISTMAS DINNER**

On the evening of January 6<sup>th</sup>, the Prelate's New Year and Christmas Dinner will take place at "Bagramian" Hall of Holy Cross Cathedral in Montebello.

The traditional dinner, which is organized by the Prelacy Ladies Auxiliary, is scheduled to begin at 6:00 p.m. and.

## **ՅԻՇԵԼՈՎ ՄԵՐ ՆՆՁԵՑԵԱԼՆԵՐԸ**

Երկուշաբթի, Յունուար 7-ին, Ս. Ծննդեան Մեռելոցի տօնին առիթով, եւ համաձայն մեր եկեղեցւոյ աւանդութեանց, մեր հանգուցեալ հարազատներուն յիշատակին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի «Հոլիվուտ Հիլզ»ի գերեզմանատան Hall of Liberty սրահին եւ Կլենտելլի գերեզմանատան Church of Recessional եկեղեցւոյ մէջ,

առաւօտեան ժամը 10:30-ին, գլխաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր եւ մասնակցութեամբ Թեմիս հոգեւոր հայրերուն:

## **REQUIEM SERVICES AT FOREST LAWN**

On the morning of January 7<sup>th</sup>, services for the remembrance of the dead will be offered at the Hollywood Hills and Glendale locations of Forest Lawn with the participation of Prelacy clergy.

The service will begin at 10:30 at the Hall of Liberty in Hollywood and the Church of the Reccessional at the Glendale location.

## **Ս. ԾՆՆՂԵԱՆ ՍՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՅԱՏՈՒԿ ՅԱՅՏԱԳԻՐ՝ «ՀՈՐԻԶՈՆ»ԷՆ**

Կիրակի, 6 Յունուար 2008-ին, Ս. Ծննդեան տօնին առիթով, «Հորիզոն» կայանը յատուկ ծրագիր մը պիտի պատկերասփռէ, հետեւաբար, Ազգային Առաջնորդարանիս «Եկեղեցին Հայկական» յայտագիրը յառաջիկայ Կիրակի բացառաբար պիտի փոխարինուի այդ յայտագիրներով:

## **“HORIZON” TO AIR SPECIAL RELIGIOUS PROGRAM**

A note to viewers of our weekly religious programming:

On Sunday, January 6<sup>th</sup>, Horizon Television will air a special program in celebration of Christmas. Our program will return the following week, Sunday, January 13<sup>th</sup>.